# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
# ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

ՇԱՐԺՈՒՄ առաջիկայ յունվարից պէտք է հրատարակվի Վիէննայում, ուր և սկսելու ենք ժողովրդական Գրքերի հրատարակութեան գործը։

Տեղափոխութեան և տպագրական գործերի կարգադրութեան համար ՇԱՐԺՈՒՄԻ հրատարակութիւնը պէտք է ընդհատվի մինչև յունվար։

Այն բաժանորդները որոնք վճարել են ամբողջ տարեկան բաժնեգինը, յունվարից կրկին կստանան ընդհատված ամիսների փոխարէնը մինչև իրենց տարին լրանալը. իսկ նրանք որոնք չեն վճարել՝ պարտաւոր են մեզ ուղարկել անցած ամիսների փոխարէնը 10 փրանք. որպէսզի յունվարից շարունակենք թերթը ուղարկել. հակառակ պարագային մենք պարտաւորված պէտք է լինենք յունվարին առանձին յայտարարութեամբ հրատարակել բոլոր չը վճարող բաժանորդների անունները, որոնք բոլորն էլ ԻՐԱՆՑ ԿԱՄՔՈՎ են ՇԱՐԺՈՒՄ ստացել։ Յուսով ենք թէ մինչև օրս իրենց պարտքը չը վճարող բաժանորդները մեզ կազատեն այդ տեսակ քայլից։

Կը խնդրենք դրամ և նամակներ մինչև յունվար ՇԱՐԺՈՒՄԻ Վառնայի հասցէով ուղարկել։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ Շարժումի

Վառնա, 30 Հոկտեմբեր 1900